Մարտի 27-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2015 թվականի մարզի խորհրդի առաջին նիստը: Նիստին մասնակցում էին ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, նախարարի տեղակալ Կարեն Իսախանյանը, նախարարության Տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը, Շիրակի մարզի 119 համայնքների ղեկավարներից 117-ը, 2-ը բացակայում էին հարգելի պատճառով, ԶԼՄ ներկայացուցիչներ: Պատասխանատուների զեկույցները ստորև.

1. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների և ոռոգման համակարգերի նախապատրաստության մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան.

2014թ. մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքեր՝2013-2014թթ.

հ/հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ պակաս /հա/
		2013թ.	2014թ.	
	Հացահատիկ	42381	43913	+1532
	Այդ թվում՝ աշնանացան ցորեն	22698	24385	+1687
	գարնանացան գարի	19683	19528	-155
	Կարտոֆիլ	4219	4268	+49
	Բանջարեղեն	1634	1698	+64
	Կերային մշակաբույսեր	12600	13733	+1133
	Տեխնիկական մշակաբույսեր	30	34	+4
Ընդամենը		60864	63646	+2782 /աճ 4.4%/

2015թ. բերքի տակ ցանվել է 26545հա աշնանացան ցորեն՝ աճ 2160հա, կատարվել է ցրտահերկ 13665հա:

Աշնանացան ցորենի սերմարտադրության ծրագիր

«Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիր».

2013-2014թ. Էլիտային վերարտադրություն.

2014թ.		2013թ.	
սերմացու	120.05 տ	սերմացու	120.15տ
շահառու	35	շահառու	38
հողատարածք	400.17հա	հողատարածք	400.5հա

2013-2014 թթ.. *առաջին վերարտադրություն.*

2014 թ.	*2013* թ.
սերմացու 1900 տոննա	սերմացու 1335 տոննա
համայնք 68	վճարման ենթակա 701.78 տոննա
	համայնք 71
	գումար 112.2 մլն դրամ
	հավաքագրվել է 92.0 մլն դրամ
	մնում է հավաքագրելու 20.2 մլն դրամ

Համայնքների կողմից լուրջ թերացում է արձանագրվել 2012-2013թթ. և 2013-2014թթ. առաջին վերարտադրության ցորենի սերմացուի գումարների հավաքագրման ուղղությամբ: 2012-2013թթ. համայնքների կողմից չի հավաքագրվել շուրջ 6 մլն դրամ և 2013-2014թթ. 20.2 մլն դրամ՝ Մարմաշեն 1.4 մլն դրամ, Հովունի 0.92 մլն դրամ, Սպանդարյան 0.6 մլն դրամ, Փոքր Մանթաշ 0.38 մլն դրամ, Աղին 1.4 մլն դրամ, Իսահակյան 6.88 մլն դրամ, Լուսաղբյուր 4.23 մլն դրամ, Հայկաձոր 2.6 մլն դրամ, Սարակապ 0.75 մլն դրամ, Ողջի 2.0 մլն դրամ, Ջույգաղբյուր 1.23 մլն դրամ, Փոքր Սարիար 0.18 մլն դրամ, Կաքավասար 0.28 մլն դրամ:

Գարնանացանի համար իրականացվող ծրագրեր

Անվճար սերմացուի տրամադրում(կարկտահարված համայնքներին, 2014թ. աշուն).

Գարնանացան գարու սերմ 569.822 տ, 2849հա,
Առվույտի սերմ 49.807 տ, 1992 հա,
Եգիպտացորենի սերմ 12.255 տ, 490 հա,

2015 թվականին մարզին հատկացվել է՝

Գարնանացան գարու սերմ 180 տ (հայտ 100 տ),
Կորնգանի սերմ 64.8 տ (հայտ 50տ),
Առվույտի սերմ 1 տ (հայտ 1տ)

Նշված քանակությամբ սերմացուները ամբողջությամբ ներկրվել են մարզ և հատկացվել են գյուղացիական տնտեսություններին:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրեր.

«ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում 2014թ. ընթացքում մարզի համայնքների կողմից գնվել է 4888.05տ ազոտական պարարտանյութ:

2015 թվականին հայտ է ներկայացվել 5000տ ազոտական պարարտանյութի համար, ներկրվել է և համայնքներին է բաշխվել շուրջ 1900տ:

«ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վեռալանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում 2014թ. ընթացքում մարզի համայնքների կողմից գնվել է 3438364 լիտր դիզելային վառելանյութ:

2015 թվականին հայտ է ներկայացվել 3500000 լիտր դիզելային վառելանյութի համար, բաշխվել է 100000 լիտր:

«ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզի համայնքների կողմից գնվել է 92.85տ կալիումական և 92.1տ ֆոսֆորական պարարտանյութ:

2015 թվականին հայտ է ներկայացվել 150տ ֆոսֆորական, 150տ կալիումական պարարտանյութերի համար:

Գյուղատնտեսական տեխնիկայի սարքինություն.

h/h	Տեխնիկայի անվանումը	2015թ.		
		Առկա քանակը, հատ	Որից՝ սարքին վիճակում, հատ	Սարքինության մակարդակը, %.
	Տրակտորներ	1 672	1 191	71.2
	Բեռնատար ավտոմեքենա	1 294	963	74.4
	Հացահատիկահավաք կոմբայններ	322	213	66.1
	Կցասայլեր	815	695	85.3
	Խոտհնձիչներ	198	164	82.8
	Կերահավաք կոմբայններ	79	41	51.9
	Հատիկազտիչ մեքենաներ	62	50	80.6
	Շարքացաններ	393	332	84.5
	Գութաններ	570	540	94.7
	Կուլտիվատորներ	446	344	77.1
	Հավաքիչ-մամլիչ	285	234	82.1

ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում 2014թ. մարզ է ներկրվել 13 միավոր <<ՄՏԶ>> մակնիշի տրակտորներ եւ գյուղ. գործիքներ: 2015թ. գյուղ. տեխնիկա ձեռք բերելու նպատակով ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից առաջարկվել է հետեւյալ գները՝ <<Նիվա-Էֆֆեկտ>> հացահատիկահավաք կոմբայններ՝ 49.044 ԱՄՆ դոլար, <<ՄՏԶ 82.1>> մակնիշի տրակտորներ՝ 17.000 ԱՄՆ դոլար:

2014թ. «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում մարզի 7 համայնքներում ձեռք է բերվել 12 միավոր գյուղատնտեսական տեխնիկա՝

Արևշատ– 2 հատ անիվավոր տրակտոր եւ գյուղ. գործիքներ,

Սարալանջ- 2 հատ անիվավոր տրակտոր,

Նահապետավան– 2 հատ անիվավոր տրակտոր,

Ծաղկուտ – 2 հատ անիվավոր տրակտոր,

Հոռոմ– 1 հատ անիվավոր տրակտոր,

Գուսաննագյուղ - Т-150 2հատ:

Ոռոգում

Ընդամենը ոռոգվող հողեր – 20104 հա
որից՝ վարելահող – 15084 հա
տնամերձ – 5020 հա

Ջրամբարների լցվածություն՝

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը մլն մ³	Լցվածությունը առ 25.03.2015թ.	Լցվածությունը առ 25.03.2015թ.	Աճ/նվազում +/-
1	Ախուրյան	540	231.2	212.97	-18.23
2	Արփի լիճ	105	12.9	11.6	-1.3
3	Կառնուտ	22.6	6.77	3.89	-2.88
4	Սառնաղբյուր	4.8	0.4	0.27	-0.13
5	Վարդաքար	5	1.16	0.5	-0.66
6	Թավշուտ	6	0.38	0.58	+0.2
7	Մանթաշ	8.2	0.56	0.69	+0.13
8	Ջաջուռ	0.28	0.19	0.17	-0.02
Ընդամենը		151.88	22.36	17.7	-4.66

Լցվածությունը 25.03.2014-25.03.2015թթ. հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

«Շիրակ» ՋՕԸ	Ստացված ջուրը հազ. մ³		Հասույթը հազ. դրամ		Գանձված է հազ. դրամ		Պարտքը հազ. դրամ		Գանձման %-ը	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
Ընդամենը՝	10781	9889	118591	108779	111475.5	102317.5	7115.5	6461.5	94	94.06

Ծրագիր

2014 թվականին ոռոգման համակարգերի հիմնանորոգում (պետ. բյուջե)

Շիր. ջրանցքի գլխամասի հանգույցների և 4 ջրթողերի վերանորոգում – 14 մլն դրամ:

«Շիրակ» ՋՕԸ-ի կողմից 2014թ. իրականացվել են ոռոգման նախապատրաստական հետևյալ աշխատանքներ՝

1. Ոռոգման ցանցի մաքրում-34.74 մլն դրամ,
2. Ոռոգման ցանցի վերանորոգում - 3.26 մլն դրամ,
3. Հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգում- 9.85մլն դրամ,
4. Պոմպակայանների նորոգում – 3.26 մլն դրամ
5. Մեքենամեխանիզմների նորոգում -7.08մլն դրամ

Ծրագիր

2015 թվականի ոռոգման համակարգերի հիմնանորոգում (պետ. բյուջե)

Օբյեկտի անվանումը	Կատարվելիք աշխատանքների համառոտ բնութագիրը	հազ. դրամ

Կառնուտի ջրամբարի վերանորոգում	Կառնուտի ջրամբարի ոռոգման ջրի ներքին բացթողման փականի և հիդրոտեխնիկական սարքավորումների վերանորոգում	7.200
Շիրակի ջրանցքի 26-րդ բաժանարարի վերանորոգում	Բ26 միջտնտեսային բաժանարարի ՊԿ 183+87 ՊԿ 193+38 քայքայված բետոնային հատվածների վերանորոգում	16.700
Արփի լիճ ջրամբարի ջրթող փականների փոխարինում նոր կոնստրուկցիայի փականներով և մոտեցնող ջրանցքի մաքրում	Մետաղական փականների վերանորոգում	15.000

«Շիրակ» ՋՕԸ-ի սպասարկման տարածքի ոռոգման համակարգերը հիմնականում գտնվում են անմխիթար վիճակում, համակարգում ջրի կորուստները հասնում է շուրջ 55-65%: Վերջին 20 տարիների ընթացքում ոռոգման համակարգերի մեծ մասը հիմնանորոգման չեն ենթարկվել, կատարվել են միայն մասնակի վերանորոգման և մաքրման աշխատանքներ:

Հատկապես անմխիթար վիճակում են գտնվում ընկերության սպասարկման առանձին տարածաշրջանների /Արթիկ, Անի, Ամասիա և Աշոցք/ միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ջրագծերը:

Ընկերությունների հիմնադրումից հետո ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվում էր համայնքային սեփականության ոռոգման ներտնտեսային ցանցերը անժամկետ հանձնել ընկերություններին, սակայն շատ հայամնքներում ոռոգման ցանցերի ոչ սարքին լինելու և կադաստրի վկայական չունենալու պատճառով նշված գործընթացը լրիվությամբ չիրականացվեց:

Ստեղծված իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ է.

1. Դոնոր կազմակերպությունների կամ համայնքների բյուջեների միջոցներով կատարել ոռոգման ներտնտեսային ցանցերի վերականգնում:
2. Համայնքների կողմից կարճ ժամկետում իրականացնել ոռոգման ներտնտեսային ցանցերի անձնագրավորում և հանձնումը ընկերությանը:

Նշված գործընթացը ավարտելուց հետո ընկերությունը նոր միայն կարող է ֆինանսական ներդրումներ իրականացնել ոռոգման ցանցերի վերականգման և վերանորոգման ուղղությամբ:

Ոռոգման ջրի մատակարարման լուրջ խնդիրներ կան Մանթաշի ջրամբարից սնվող Արթիկի տարածաշրջանի համայնքներում ոռոգում կազմակերպելու գործում:

Մանթաշի ջրամբարից ոռոգման ջրի մատակարարում համայնքներին հիմնականում իրականացվել է խորհրդային տարիներին կառուցված ոռոգման բաց ցանցերի /ջրատարների/ միջոցով՝ նախկին խորհրդային տնտեսությունների և կոլտնտեսությունների հողերը ոռոգելու համար:

Ոռոգելի հողերի սեփականաշնորհումից հետո հողատարածքները մասնատվել են և ջրագծերի անբավարար տարողունակության պատճառով միայն ջրաղբյուրին մոտ գտնվող համայանքներում է, որ ոռոգումն իրականացվում է բավարար մակարդակով, իսկ ծայրամասային համայանքների ջրօգտագործողների հողերը կամ չեն ոռոգվում կամ ոռոգվում են մասամբ, որի հետևանքով մշտապես արձանագրվում են իրավացի դժգոհություններ:

Հարցին լուծում տալու համար առաջարկվում է՝

ա)Մանթաշի ջրամբարից սնվող 12 կմ երկարությամբ մայր ջրանցքի տարողականությունը մեծացնել 2մ^3 հասցնել մինչև 3մ^3:

բ)Գլխամասից կառուցել 5 կմ երկարությամբ 500 մմ տրամագծով ոռոգման փակ համակարգ մինչև Փանիկ համայնք:

Կա նաև վերոնշյալ հարցի ամբողջական լուծում՝ դա Արթիկի ջրամբարի վերականգնումն է իր նախագծային ծավալով, որը կապահովվի Արթիկի և Ախուրյանի տարածաշրջանների մի շարք համայնքների ջրապահովվածությունը:

2. ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2014 թվականի տարեկան արդյունքների և 2015 թվականի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան.

2015թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 99.5%-ով, նախատեսված 1,828,625.9 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 1,819,144.5 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է - 9,481.4 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2014թ. բյուջեների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի. /հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2014թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	386,116.1	354,292.5	- 31,823.6	91.8
Գույքահարկ	621,348.8	662,401.0	41,052.2	106.6
Պետական տուրք	50,840.0	50,035.0	- 805.0	98.4
Տեղական տուրք	139,094.9	134,441.2	- 4,653.7	96.7
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	318,834.1	297,311.0	- 21,523.1	93.2
ա/ հողի վարձավճար	284,035.3	260,839.6	- 23,195.7	91.8
բ/ գույքի վարձավճար	34,798.8	36,471.5	1,672.7	104.8
Այլ եկամուտներ	312,392.0	320,663.7	8271.7	102.6
Ընդամենը սեփական եկամուտներ	1,828,625.9	1,819,144.5	- 9,481.4	99.5

2014թ. փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2013թ. տարեկան փաստացի հավաքագրվածի համեմատությամբ կազմում է 4.9% կամ ծավալային առումով 2013թ. համեմատությամբ ավել է հավաքագրվել 84,267.1 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

h/h	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2014թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Ախուրյան	325,795.1	295,723.1	-30,072.0	90.8
2	Արթիկ	224,343.6	230,571.4	6,227.8	102.8
3	Անի	144,807.2	135,773.1	-9,034.1	93.8
4	Ամասիա	77,099.5	65,823.6	-11,275.9	85.4
5	Աշոցք	73,681.1	65,781.7	-7,899.4	89.3

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2014թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ամասիայի տարածաշրջանում՝ 85.4 %, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 92.2 %, կամ նվազումը տոկոսային առումով կազմել է 6.8%:

Մարզի թվով 41 համայնքներում նախատեսվածի հանդեպ 100% և ավելի բարձր ցուցանիշ են ապահովվել սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ / տես հավելված նո. 1/

Մարզի քաղաքային համայնքները 2014թ. սեփական եկամուտները կատարել են՝ Գյումրի քաղաքը՝ 104.3%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 99.5 %, կամ 4.8%-ի աճ, Արթիկ քաղաքը՝ 105.0%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 93.6%, կամ 11.4%-ի աճ, Մարալիկ քաղաքը՝ 103.4%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 99.6%, կամ 3.8%-ի աճ:

Նշված համայքների կողքին, սակայն մարզի թվով 77 համայնքներ չեն ապահովել 2014թ. արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 99.5%-ը, իսկ թվով 4 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը / տես հավելված նո. 2/:

2015թ. մարտի 1-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 89.4%-ով, նախատեսված 279,966.3 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 250,315.7 հազ. դրամ:

Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է - 29,650.6 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2015թ. բյուջեների երկու ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2015թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	50,946.0	31,823.3	- 19,122.7	62.5
Գույքահարկ	104,903.1	125,668.4	20,765.4	119.8
Պետական տուրք	7,796.4	7,511.7	- 284.7	96.3
Տեղական տուրք	22,091.4	26,688.1	- 4,596.7	120.8
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	48,769.7	24,730.8	- 24,039.0	50.7
ա/ հողի վարձավճար	42,551.3	18,676.6	- 23,874.7	43.9
բ/ գույքի վարձավճար	6,218.4	6,054.2	- 164.2	97.4
Այլ եկամուտներ	45,459.7	33,893.4	- 11,566.3	74.6
Ընդամենը սեփական եկամուտներ	279,966.3	250,315.7	- 29,650.6	89.4

2015թ. փաստացի հավաքագրվածի նվազման %-ը 2014թ. երկու ամիսների փաստացի հավաքագրվածի համեմատությամբ կազմում է 16.3% կամ ծավալային առումով պակաս է հավաքագրվել 48,717.4 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2015թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Ախուրյան	46,339.2	35,763.5	-10,575.7	77.2
2	Արթիկ	33,211.9	32,923.2	-288.7	99.1
3	Անի	16,238.8	11,897.9	-4,340.9	73.3
4	Ամասիա	12,550.1	6,876.2	-5,674.0	54.8
5	Աշոցք	13,593.1	5,908.5	-7,684.6	43.5

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2015թ. երկու ամիսների սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Աշոցքի տարածաշրջանում՝ 43.5 %, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 44.1 %, նվազումը 0.6%:

Մարզի թվով 25 համայնքներում նախատեսվածի հանդեպ 100% և ավելի բարձր ցուցանիշ են ապահովվել սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ / տես հավելված նո. 1/

Մարզի քաղաքային համայնքները 2015թ. երկու ամիսների սեփական եկամուտները կատարել են՝ Գյումրի քաղաքը՝ 99.3%, Արթիկ քաղաքը՝ 137.1%, Մարալիկ քաղաքը՝ 104.0%,:

Նշված համայքների կողքին, սակայն մարզի թվով 46 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը / տես հավելված նո. 2/:

Առանձին համայնքների ղեկավարների կողմից մշտապես չի ապահովվում սեփական եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ, այդ համայնքներն են՝ Սալուտ՝ 2014թ. 20.4% և 2015թ. երկու ամիս 0.0%, Սարակապ 2014թ. 31.0% և 2015թ. երկու ամիս 7.5%, Հողմիկ՝ 2014թ. 55.2% և 2015թ. երկու ամիս 0.0%, Փոքր սեպասար՝ 2014թ. 49.8% և 2015թ. երկու ամիս 0.3%, Հովունի՝ 2014թ. 49.4% և 2015թ. երկու ամիս 0.0% և այլն /տես հավելված 2/:

Համայնքների ղեկավարները առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն հողի հարկի և հողի վարձակալական վճարների գծով եկամուտների ապահովման նոր մոտեցումների ձևավորմանը, որոնք ենթադրում են համայնքների կողմից օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների առավել խիստ և արդյունավետ կիրառմանը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

Մարզպետարանը անհրաժեշտ կազմակերպչական աշխատանք է տանում, ինչպես նաև անհրաժեշտ աջակցություն է կազմակերպվում համայնքների ղեկավարներին՝ համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրման և 2015 թվականի առաջին եռամսյակի առաջադրանքի կատարումն ապահովելու գործում:

ՀՀ պետական բյուջեով 2015 թվականին նախատեսվել է տրամադրելու 4,168,405.2 հազ. դրամ դոտացիա, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 390,067.7 հազ. դրամով: Ընդհանուր առմամբ թվով 79 համայքներում գրանցվել է դոտացիայի աճ, իսկ թվով 8 համայնքում նվազում:

Նվազագույն աշխատավարձի բարձրացման և էլեկտրաէներգիայի, գազի գների բարձրացման հետևանքով ՀՀ պետական բյուջեից մարզի համայնքներին 2015 թվականի <<Այլ դոտացիաներ>> հոդվածով հատկացվելու է ընդհանուր առմամբ 283 095.0 հազ. դրամ:

3. Մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ Զորիկ Խաչատրյան

Համաձայն մարզի 2014 թվականի հողային հաշվեկշռի, մարզի համայնքների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 114 767.47 հա (75.5 %), իսկ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականության հողերը՝ 37303.21 հա (24.5 %), ընդամենը՝ 141 114.92 հա:

2015 թվականի մարտի 1-ի դրությամբ իրավունքների պետական գրանցում ստացած համայնքային և պետական սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումն ըստ տարածքշրջանների ունի հետևյալ տեսքը՝

Հողատեսքը	Ըստ հաշվեկշիռ-ների (հա)	Համայնքային և պետական սեփականության հողեր			
		Տրամադրված է օգտագործման (հա)	Վարձավճարը ըստ պայմանագրերի (հազ. դրամ)	Ապառքը 01.01.2015թ. դությամբ	Տեսակարար կշիռը հողերի կազմում (%)
Ախուրյանի տ/շ	23 760.11	2 374.693	37 387.197	3 311.865	10.0
Արթիկի տ/շ	25 421.9	5 445.6	31 061.532	3939.571	21.4
Անիի տ/շ	24944.01	2573.142	15 576.981	5 526.276	10.31
Ամասիայի տ/շ	35 219.38	6 973.16	27 973.17	2334.1	19.8
Աշոցքի տ/շ	31769.53	2511.669	8321.04	1486.313	8.0
Ընդամենը մարզում					
1 վարելահող	18785.67	10192.658	89196.172	13003.091	54.2
2 խոտհարք	7803.75	2464.331	11602.062	1129.167	31.5
3 արոտ	114483.7	7247.642	19521.784	2465.828	6.3
Ընդամենը	141114.92	19904.631	120320.018	16598.086	14.1

Ինչպես երևում է ներկայացված թվային տվյալներից, մարզի տարածքում առկա 141 115 հա գյուղատնտեսական նշանակության հողերից (առանց այլ հողատեսքերի) օգտագործման են տրամադրված և օրենքով սահմանված կարգով պետական գրանցման են ենթարկված ընդամենը
19 904.63 հեկտարը (14.1%):

Պետք է խոստովանել, որ հողերի օգտագործման նշված մակարդակը դեռևս հեռու է բավարար լինելուց և խոսում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների ոչ արդյունավետ իրականացնելու մասին:

ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից եվ խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված՝ պարզ ընթացակարգով, մինչև 3 տարի օգտագործման ժամկետով, վարձակալության է տրամադրված պետական և համայնքային սեփականության 875.73 հա արոտ և 8119.8 հա խոտհարք, ընդամենը՝ 8995.53 հա (տեսակարար կշիռը հողերի կազմում՝ 7.3 %)

Ընդամենը մարզում պետական գրանցում ստացաց և պարզ ընթացակարգով օգտագործման տրամադրված հողերի կազմը						
հհ	Հողատեսքը	Ըստ հաշվեկշիռ-ների /հա/	Համայնքային և պետական սեփականության հողեր			
			Տրամադրված է օգտագործման /հա/	Վարձավճարը ըստ պայմանագրերի /հազ. դրամ/	Ապառքը	Տեսակարար կշիռը հողերի կազմում /%/
1	վարելահող	18 785.67	10192.658	89196.172	13003.091	54.2
2	խոտհարք	7 803.75	3340.061	15703.095	1819.957	43.0
3	արոտ	114 483.7	15367.442	32384.861	4244.228	13.4
Ընդամենը		141 114.92	28900.161	137284.128	19067.276	20.5

Համայնքների կողմից օգտագործման տրամադրվող հողամասերի հատակագծերը կազմելու համար համայնքների բյուջեներից կատարում են ծախսեր, նախապատրաստվում և անցկացվում են մրցույթներ, կնքվում են համապատասխան պայմանագրեր, սակայն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում այդ պայմանագրերը չեն ենթարկվում նոտարական վավերացման և անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումներում չեն ստանում իրավունքների պետական գրանցում: Արդյունքում՝ այդ պայմանագրերը համարվում են ոչ օրինական, իսկ հողօգտագործումը՝ ինքնակամ:

Այդ համայնքներից են՝ Բենիամին, Կրաշեն, Բասեն, Փոքրաշեն, Հովիտ, Ջիթհանքով, Սարակապ, Հողմիկ, Բերդաշեն, Ողջի, Փոքր Սեպասար, Ղազանչի, Զույգաղբյուր նայլն:

Առանձին դեպքերում համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը, այդ թվում նաև վարելահողերը, վարձակալության են տրամադրվում մասնակիորեն, իսկ մնացած հողամասերի համար պարբերաբար մրցույթներ չեն կազմակերպում և արդյունավետ հողօգտագործում ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվում:

Այդ համայնքներից են՝ Բերդաշեն, Ղազանչի, Ջորաշեն, Գեղանիստ, Ջրառատ և այլն:

Վարելահողերի և խոտհարքների օգտագործման տրամադրման ցածր մակարդակը առանձին համայնքներում ունի նաև որոշակի օբյեկտիվ պատճառներ: Այդ հողամասերի զգալի մասը գտնվում են մեծ թեքությունների վրա, օգտագործման ընթացքում խիստ էռոզացվել են և համապատասխան միջոցների բացակայությամբ պայմանավորված կուլտուրտեխնիկական, ագրոտեխնիկական և այլ գյուղատնտեսական միջոցառումներով հողատեսքերի որակական հատկանիշները հնարավոր չէ վերականգնել, կամ հողամասերում ընթանում են ճահճացման, աղտոտման և այլ երևույթներ, որոնք հնարավոր չէ վերականգնել կանխարգելման միջոցառումներով:

Համայնքների բյուջեներում այդ հողատարածքների համար նախատեսվում են հողի վարձակալական վճարներից եկամուտներ, սակայն տարիներ շարունակ այդ հողատեսքերը չեն վարձակալվում, համայնքների բյուջեներին համապատասխան եկամուտներ չեն բերում և չեն ապահովվում սեփական եկամուտների կատարման առաջադրանքները:

Նման խնդիներ ունեցող համայնքների ղեկավարները մեր կողմից բազմիցս տեղեկացվել են, որ ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանականության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 1066-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով, մարզպետի կողմից ստեղծված գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում, համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշմամբ, այդ բարձրարժեք հողատեսքերը կարող են փոփոխվել ավելի ցածրարժեք հողատեսքերի և սահմանված կարգով տրվել վարձակալության:

Արոտների օգտագործում

2015 թվականին մարզում հաշվառված 105 046 գլուխ խոշոր և 83 986 գլուխ մանր եղջերավոր անասունների արածեցման համար ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 14-ի <<Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը հաստատելու մասին>> N 389-Ն որոշմամբ սահմանված նորմերով կատարված հաշվակների համաձայն անհրաժեշտ է առնվազն 120 000 հա արոտ:

Իսկ մարզում առկա 114 483.7 հեկտար արոտներից, վարձակալության է տրամադրված միայն 15 367.442 հեկտարը (13.42 %): Այսինքն արոտների հիմնական մասը մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից օգտագործվում են առանց վարձակալության պայմանագրերի և այդ հողօգտագործումից տեղական բյուջեները եկամուներ չեն ստանում:

Հարկ եմ համարում համայնքների ղեկավարներին հիշեցնել, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից եվ խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշմամբ պետական և համայնքային սեփականության արոտների և խոտհարքների օգտագործման տրամադրման կարգը պարզեցվել է և համայնքների ղեկավարներին հնարավորություն է տրվել համայնքային ու պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու պայմանագրերը կնքել պարզ գրավոր ձևով՝ մինչև 3 տարի ժամկետով: Այսինքն, նման դեպքերում հողօգտագործման պայմանագրերի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար պահանջներ չեն ներկայացվում:

Արոտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանվում է տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Հողի վարձակալական վճարների հավաքագրում

2014 թվականին մարզի համայնքներում հողի և գույքի վարձակալական վճարների հավաքագրման մակարդակը ունի հետևյալ տեսք՝

/հազ.դրամ/

Քաղաքային համայնքներ, տարածաշրջան	2014թ. նախատեսված հողերի վաձակալական վճարներից եկամուտներ	Փաստացի կատարողականը առ՝ 25.11.2014թ. դրությամբ	Շեղումը /+,-/	Կատարման %-ը
Գյումրի	145802,5	146279,0	476,5	100,3
Արթիկ	6 828,2	4 595,0	-2 233,2	67,3
Մարալիկ	4 219,0	4 476,0	257,0	106,1
Ախուրյանի տ/շ	59 960,5	51 771,6	-8 188,9	86,3
Արթիկի տ/շ	37 359,0	34 118,6	-3 240,4	91,3
Անիի տ/շ	29 294,6	25 777,4	-3 517,2	88,0
Ամասիայի տ/շ	31 255,8	25 633,8	-5 622,0	82,0
Աշոցքի տ/շ	15 161,7	13 730,7	-1 431,0	90,6
Ընդամենը մարզում	*318 834,1*	*297 311,0*	*-21 523,1*	*93,25*

2014 թվականին հողի վարձակալության վճարի գանձման ցուցանիշը մարզում կատարվել է 93.25 %-ով, կամ նախատեսվածից պակաս է գանձվել 21523.1 հազ.դրամ: 2013 թվականի համեմատությամբ ավել է հավաքագրվել 8439.8 հազ. դրամ վարձավճար, կամ նախորդ տարվա նկատմամբ ապահովվել է 2.9 %-ի աճ:

Մարզի նախկին տարածաշրջաններից 2014 թվականին հողերի վարձակալական վճարների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ամասիայի տարածաշրջանում՝ 82.0 %, իսկ քաղաքային համայնքներից՝ Արթիկի համայնքում՝ 67.3 %,:

Մարզի թվով 51 համայնքներ չեն ապահովել մարզում արձանագրված հողերի վարձակալական վճարների կատարման միջին ցուցանիշը (93.25%), այդ թվում Ախուրյանի տարածաշրջանում՝ 15 համայնք, Արթիկի տարածաշրջանում՝ 8 համայնք, Անիի տարածաշրջանում 4 համայնք, Ամասիայի տարածաշրջանում 13 համայնք և Աշոցքի տարածաշրջանում՝ 11 համայնք, իսկ Բայանդուր, Բենիամին, Հովունի, Սարակապ, Վարդաղբյուր, Փոքր Սարիար, Փոքր Սեպասար և Սալուտի համայնքները չեն ապահովել ստանձնած առաջադրանքի նույնիսկ 50%-ը:

Մարզի թվով 53 համայնքներ հողերի վարձակալական վճարների հավաքագրման գործում ապահովել են 100 և ավելի բարձր տոկոսի ցուցանիշներ, որից Ախուրյանի տարածաշրջանում՝ 14 համայնք, Արթիկի տարածաշրջանում՝ 15 համայնք, Անիի տարածաշրջանում՝ 8 համայնք, Ամասիայի տարածաշրջանում՝ 5 համայնք և Աշոցքի տարածաշրջանում՝ 11 համայնք:

Համայնքների բյուջեների կատարման վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մարզի առանձին համայնքներում հողօգտագործման պայմանագրերով նախատեսված վարձատուի և վարձակալի իրավունքների ու պարտավորությունների կատարման հարցում կան տարբեր մոտեցումներ և ընկալումներ:

Այլապես, ինչպես բացատրել այն իրողությունը, որ աշխարհագրական նույն դիրքը, բնակլիմայական նույն պայմաններն ու բերքատվության նույն ցուցանիշներն ունեցող երկու հարևան համայնքներից մեկում հողօգտագործողները բարեխղճորեն են կատարում վարձակալի իրենց պարտավորությունները, իսկ հարևան մյուս համայնքներում՝ ոչ:

Օրինակ. Ախուրյանի տարածաշրջանի Բայանդուր և Բենիամին համայնքներում վարձակալական վճարների կատարումը չի գերազանցել 29.7 %-ը, իսկ հարևան՝ Ղարիբջանյան կամ Երազգավորս համայնքում ապահովել է 100 %-ից բարձր չուցանիշ, Սալուտի համայնքում 2014 թվականին հողի վարձավճար չի հավաքագրվել, իսկ հարևան՝ Հարթաշենի համայնքում ապահովվել է 119.2 % ցուցանիշ, իսկ Մուսայելյանի համայնքում՝ 137.2 % ցուցանիշ:

Վարձավճարների գանձումների գործընթացը վերլուծելիս ակնառու է դառնում այն փաստը, որ վարձավճարների հավաքագրման բարձր ցուցանիշներ են արձանագրվել հատկապես այն համայնքներում, որտեղ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման իրավունքի պետական գրանցման մակարդակը բարձր է:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը համայնքների բյուջեներին կարող ապահովել լրացուցիչ եկամուտներ և լուծել համայնքներում առկա շատ խնիրներ:

<u>Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն</u>

Վարչական հսկողության 2014 և 2015 թվականների աշխատանքային ծրագրերի համաձայն 2014 թվականին նախատեսված մարզի 23 և 2015 թվականի 1-ին եռամսյակում նախատեսված 6 համայնքներում իրականացվել են հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն:

Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել են համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, օգտագործման տրամադրման, հողային ֆոնդի նպատակային օգտագործման և վարձավճարների գանձման օրինականությունը, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանումը:

Վերահսկողության արդյունքում, հողերի օգտագործման և պահպանման խախտումներ թույլ տալու համար, մարզպետի համապատասխան որոշումներով, համայնքների երկու ղեկավարների նկատմամբ կիրառվել են վարչական տույժեր:

Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռներով, ի օգուտ երկու համայնքների բռնագանձվել է 3 040.0 հազար դրամ վարձավճար, 2 296.0 հազ. դրամի բռնագանձումն ընթացքի մեջ է, իսկ Մեծ Սարիարի համայնքի կողմից դատարան հայցադիմում է ներկայացվել 252.0 հազար դրամ վարձավճարի բռնագանձման պահանջով:

<u>Հողաշինարարական ընթացիկ աշխատանքների մասին</u>

Գերմանական զարգացման բանկի ֆինանսավորմամբ (KFW) «Ինտեգրացված պայքար էրոզիայի դեմ» ծրագրի շրջանակներում «Զի-Այ-Զեթ» և «Էկոկոնսալտ» կազմակերպությունների հետ համատեղ մշակվել և իրականացման փուլում է ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ և Սարալանջ համայնքների վարչական տարածքներում գտնվող արոտների լանջային տարածքների էրոզիայի կանխման պիլոտային ծրագիրը՝ էրոզիայով վտանգված տարածքների անտառապատման միջոցով:

«Էյ-թի-Փի» բարեգործական հիմնադրամի «Հայաստան ծառատունկ» ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի Սարալանջի, Գետափի, Բասենի և Սարատակի համայնքների վարչական տարածքներում իրականացվել են ընդամենը 7.6 հա համայնքային անտառների հիմնման աշխատանքներ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի շրջանակներում 2014 թվականին մարզի թվով 7 համայնքների վարչական տարածքներում իրականացվել են շուրջ 8600 հա արոտների և խոտհարքների բարելավման ու ջրարբիացման աշխատանքներ, որից Արևշատի համայնքում՝ 1300 հա, Սարալանջի համայնքում՝ 1700 հա, Նահապետավանի համայնքում՝ 1000 հա, Ծաղկուտի համայնքում՝ 1700 հա, Հոռոմի համայնքում՝ 1000հա, Գուսաննագյուղի համայնքում՝ 900հա, Գտաշենի համայնքում՝ 1000 հա:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից մշակված Ազգային ռազմավարության ծրագրի շրջանակներում Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ ԱԶԲ-ի դանիական խորհրդատվական թիմի (ՔՈՎԻ) կողմից Շիրակի մարզում իրականացվում են կոշտ կենցաղային թափոնների կառավարման իրագործելիության բարելավման տեխնիկա-տնտեսական հինավորման աշխատանքներ:

Աջակցություն է ցուցաբերվել խորհրդատվական թիմին կոշտ կենցաղային թափոնների տեղադրման մարզային նոր աղբավայրի տարածքի ընտրության և հավանության արժանացած տարածքներում գեոդեզիական և երկրաբանական աշխատանքներ կատարելու գործում:

<<Արփի լիճ>> ազգային պարկի տարածքների վիճելի հատվածների հարցի կապակցությամբ հավանության է արժանացել մարզպետարանի կողմից ներկայացված առաջարկությունը՝ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ աշխատանքային խումբ ստեղծելու և եղանակային պայմանների բարելավումից հետո, պարկի տարածքների վիճելի հատվածների սահմանների ճշգրտման աշխատանքներ կատարելու, անհրաժեշտության դեպքում նաև գործառնական գոտիների փոփոխության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու և առկա խնդիրներին հնարավոր լուծումներ տալու վերաբերյալ:

4. Գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների մասին:

Զեկուցող՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ՝ *Մարատ Սարիբեկյան:*

Ինչպես գիտենք գարնանային վարարումները գետերի ջրային ռեժիմի հիմնական փուլերից մեկն է, որը ձևավորվում է հալոցքային, ստորերկրյա ջրերից, անձրևաջրերից և սովորաբար ունի խառը սնում:

Մարզի տարածքում պարբերաբար՝ 3-10 տարին մեկ տեղատարափ անձրևների և ձնածածկույթի հալոցքներից առաջանում են միջին հզորությամբ սելավներ, որոնց դեպքում խցանվում են կամուրջների բացվածքները և խողովակային անցումները, ողողվում են սելավատարների ափապաշտպան կառուցվածքների հիմքերը և գյուղատնտեսական հողատեսքերը:

Մարզի առավել հեղեղավտանգ տեղամասերով հայտնի են Ղորղոբա, Ղարանղու, Աշոցք, Ախուրյան գետերը, Գյումրի-Չայ գետակը, Մարալիկի, Ջաջուռի, Ողջիի, Մարմաշեն-Հովունի, Կամո-Կառնուտ հեղեղատարները:

ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով կազմվել և սույն թվականի փետրվարի 16-ին ՀՀ Շիրակի մարզպետի կողմից ընդունվել է <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2015 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների վերաբերյալ>> N 20-Ա որոշումը:

ՇՄՓՎ կողմից կազմվել է մարզի տարածքում 2015 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների ծրագիրը, որտեղ համայնքների ղեկավարները ներկայացրել են իրենց կողմից 2015 թվականի ընթացքում իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումները: Համաձայն այդ ծրագրի, հեղեղավտանգ ժամանակահատվածում սելավատարների հուների մաքրման աշխատանքներ են նախատեսել իրականացնել Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքներում, Ախուրյանի տարածաշրջանի 17 համայնքներում, Անիի տարածաշրջանի 8, Արթիկի տարածաշրջանի 22, Ամասիայի տարածաշրջանի 11, Աշոցքի տարածաշրջանի 10 համայնքներում:

Գյումրի համայնքում նախատեսվում է սելավատարի հունի մաքրում 300մ երկարությամբ, Արթիկում – 530մ, Մարալիկում – 700մ, Ախուրյանում – 450մ, Ազատանում – 2000մ, Աշոցքում և Ամասիայում – 500 ական մետր:

Ըստ հիդրոօդերևութաբանական ծառայության կանխատեսումների մարզի տարածքում ջրամբարների, գետերի առավելագույն ելքերը հնարավոր են մայիս ամսվա առաջին տասնօրյակից հետո:

Մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվել է պատրաստի վիճակի բերել արագ արձագանքման խմբերը, ինժեներական տեխնիկան և ունենալ պահուստային վառելիք կանխարգելիչ միջոցառումների իրականացման նպատակով: Այս ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները սկսվել են մարտի 1-ից, իսկ հիմնական աշխատանքները իրականացվում են մարտի 20-ից, որոնք կշարունակվեն ոչ միայն մինչև հեղեղավտանգ ժամանակահատվածի ավարտը, այլ ամբողջ տարվա ընթացքում:

Համայնքների ղեկավարները պարտավոր են՝ սկսած սույն թվականի ապրիլի 1-ից, 10 օրը մեկ անգամ ՇՄՓՎ ներկայացնել տեղեկություններ իրենց կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ, իսկ ՇՄՓՎ կողմից իրականացվելու է հսկողություն կատարված աշխատանքների ուղղությամբ:

Կանխարգելիչ ամենակարևոր միջոցառումներից ուզում եմ նշել.

- մարզի տարածքում գտնվող ջրամբարների ինժեներատեխնիկական հսկողության ուժեղացումը և անվտանգության ապահովումը (կուտակման ծավալների ճշտում, ջրթող փականների և սարքավորումների նորոգում և կարգաբերում):
- մարզի ջրամբարների տնօրենները, հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության, օդկայանների պետերը՝ հեղեղավտանգ ժամանակահատվածում օրական 2 անգամ ժամը 09:00-ին և 21:00-ին Շիրակի ՄՓՎ-ին տրամադրում են տեղեկություններ մարզի գետերի, ջրամբարների ջրի մակարդակների դիտարկումների և եղանակային կանխատեսումների վերաբերյալ.

Անցած 7 տարիների ընթացքում մարզում արձանագրված հեղեղումների դեպքերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ձմեռային ժամանակաշրջանի հիդրոօդերևութաբանական պայմանները ապրիլ-հունիս ամիսների հոսքի ձևավորման մեջ կունենան կամ դրական, կամ բացասական ազդեցություն՝ կախված ջերմաստիճանի կտրուկ բարձրացումից:

Մարզում 2008թ-ին արձանագրվել է սելավի 4 դեպք, 2009թ.-2, 2010թ.–3, 2011թ. – 2,
2012թ. – 2, 2013 և 2014թթ-ին սելավի դեպքեր չեն արձանագրվել:

Սույն թվականի մարտի 26-ին ՇՄՓՎ-ում անցկացվել է խորհրդակցություն մարզի բոլոր շահագրգիռ կազմակերպությունների ղեկավարների հետ, որոնք ներկայացրել են իրենց կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքները, մասնավորապես ներկայացվել են մոտավոր տեղեկություններ ապրիլ ամսվա եղանակային կանխատեսումների վերաբերյալ, օդի միջին ամսական ջերմաստիճանը սպասվում է + 3-ից + 6, որը մոտ է կլիմայական նորմերին, իսկ ամսական տեղումների քանակը ենթադրվում է կլիմայական նորմայից ավել (նորման կազմում է 61 – 86 մմ.):

Արփի լճի ջրամբարում առավելագույն լցվածությունը – 105 մլն մ^3, 26.03-ի դրությամբ առկա ծավալը - 11,5 մլն մ^3, Կառնուտի ջրամբարում – 22,6 մլն մ^3, 26.03-ի դրությամբ– 3,91 մլն մ^3, Մանթաշի ջրամբարում – 8,2 մլն մ^3, 26.03-ի դրությամբ – 0.69 մլն մ^3, Վարդաքարի ջրամբարում – 5,5 մլն մ^3, 26.03-ի դրությամբ - 0,67 մլն մ^3, Սառնաղբյուրի ջրամբարում – 5,0 մլն մ^3, 26.03-ի դրությամբ– 0,27 մլն մ^3, Թավշուտի ջրամբարում – 6,0 մլն մ^3 , 26.03-ի դրությամբ – 0.57 մլն մ^3:

Ախուրյանի ջրամբարում- 525մլն մ^3, 26.03-ի դրությամբ –250 մլն մ^3 :

Մարզի տարածքում 26.03.2015թ-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը կազմում է՝

Արթիկի օդկայանում – 0 սմ.

Գյումրու օդկայանում – 0 սմ.

Աշոցքի օդկայանում – 36 սմ.
Ամասիայի օդկայանում – 19 սմ.

Ջերմաստիճանի կտրուկ բարձրացման հետևանքով հնարավոր է Ախուրյան և Ղարանղու գետերում ջրի մակարդակի բարձրացում: Ախուրյան գետի ջրի մակարդակի բարձրացումը վտանգ է ներկայացնում Առափի, Ազատան, Երազգավորս, Բայանդուր համայնքների գյուղատնտեսական հողատեսքերին, իսկ Ղարանղու գետի ջրի մակարդակի բարձրացումը վտանգ է ներկայացնում Անուշավան, Նոր Կյանք, Հոռոմ, Սարատակ, Մեծ և Փոքր Մանթաշ համայնքների գյուղատնտեսական հողատեսքերին:

ՇՄՓՎ կողմից նախատեսվում է նաև Շիրակի մարզային զանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար իրազեկել բնակչությանը սպառնացող վտանգների և ձեռնարկվելիք միջոցառումների մասին:

ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի ելույթն ավելի շատ հանձնարարական բնույթ էր կրում, լսելով զեկուցողներին, պարոն Տերտերյանը նշեց, - նախորդ տարի մի քանի աշխատանքային հանդիպում ենք ունեցել տարվա ընթացքում ցածր ցուցանիշներ գրանցած համայնքապետերի հետ, արդյունքում, ինչպես խոստացել էին տարեվերջ բարձրացնելու սեփական եկամուներ, իրենց խոսքի տերը մնալով բավականին բարձր ցուցանիշներով եզրափակեցին տարին: Դա այն համայնքապետերի մասին, ովքեր կրում են պատասխանատվության զգացում, բայց ցավոք, կան համայնքներ, որոնց ղեկավարների մոտ մինչև 50 տոկոս կամ ավելի ցածր ցուցանիշ ունենալը, երկու կամ երեք, հինգ տարվա ցուցանիշ չէ, նրանք արդեն 10 տարի նույն ցածր ցուցանիշն են տալիս, առանց լուրջ հետևություն անելու, թե, որն է իրենց դերը համայնքում, եթե չեն ապահովում վարձավճարների գանձումը և ստանում դոտացիա: Պարոն Տերտերյանն անդրադարձավ նաև սերմացուների ստացման և վերադարձման գործընթացին, նշելով, որ այն կոմերցիոն ձևով է ձեռք բերվում, հետևաբար չի կարելի անլուրջ մոտեցում ցուցաբերել գումարների գանձնման գործընթացի նկատմամբ: Մարզի խորհրդի նիստն ամփոփեց Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանը, ով ևս անդրադարձավ համայնապետերի գանձումներին: - Ընտրություններից առաջ դիմեցիք, խնդրեցիք, որ նախընտրական շրջան է, բնակչության հետ խնդիրներ չառաջանալու համար, կարելի է ընտրություններից հետո իրականացնել գումարների հավաքագրումը, ընդառաջեցինք, տվեցինք ժամկետ մինչև մարտի 1-ը, այսօր մարտի 27-ն է, ասեք, ով է իր խոստմանը տեր կանգնել: Հիմա համոզվեցիք, որ մշտապես մենք ենք ձեզ ընդառաջ գնում, դուք ճիշտ հակառակը, ձեզ վերջնաժամկետ մինչև ապրիլի 1-ը: Մարզպետն անդրադարձավ ջրի խնդրին ևս: Այո, վիճակը վատ է, միայն հուսադրողը սպասվող անձրևները կլինեն, իսկ օգտագործման հարցում խիստ զգուշացրեց, թույլ չտաք նախորդ տարվա սխալը, երբ սխալ տեղից բաց տողեցիք ջուրը, արդյունքում ջուրը կորավ, գյուղացին էլ ջուր չստացավ: Աղբահանությունը ևս մարզի համար խնդիր է դարձել, անհասկանալի է, որ մարդն իր դուռը, իր տունը չի մաքրում, մաքուր չի պահում, անցնում եմ մարզի բոլոր ճանապարհներով, նույն վիճակն է, աղբը թափված է, հավաքող չկա, խիստ հետևողական եղեք աղբահանությանը: Եվ անդրադառնալով հատկապես ,,Արփի ազգային պարկի,, տարածքների հետ կապված խնդրին, այո, կստեղծվի հանձնաժողով, որը կաշխատի տեղում և ըստ այդմ հարցին լուծում կտրվի, միայն թե արդարանալ, իբր տեղյակ չեք եղել տրամադրման չափերից և քանակից, դա իրականությանը չի համապատասխանում: Մարզի խորհրդի նիստի ավարտին, պարոն Տերտերյանը պատասխանեց լրագրողների մի քանի հարցերի, որոնք վերաբերվում էին համայնքների խոշորացման ծրագրին և կառավարության տրամադրած 2.3 մլրդ դրամ փոխհատուցմանը: